Օգնեք որևէ մեկին խնայել 4,000 դոլար՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի վճարումների վրա

2012թ.

Ինչպես կարող եմ ինչ-որ մեկին օգնել՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծախսերը հոգալու գործում:

Այժմ Դուք կարող եք օգնել Ձեզ համար կարևոր մեկին՝ Հավելյալ օգնության դիմել Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի ծախսերը հոգալու գործում: Ցանկացած անձ, ով Medicare ունի, կարող է օգնություն ստանալ՝ Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի ծախսերը հոգալու համար: Սահմանափակ միջոցներ և եկամուտ ունեցող որոշ անձինք կարող են Հավելյալ օգնություն ստանալ՝ Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի ամսական ապահովագրավճարները, տարեկան պահումները և համավճարները կատարելու համար: Հավելյալ օգնությունը հաշվարկված է՝ կազմելու տարեկան մոտ 4,000 դոլար: Շատ մարդիկ իրավասու են օգտվելու այս խոշոր խնայողություններն անելու հնարավորությունից և նույնիսկ չգիտեն այդ մասին: Ծրագրի պահանջներին որևէ անձի համապատասխանությունը պարզելու համար Սոցիալական ապահովության վարչությունը պետք է իմանա նրա խնայողությունների, ներդրումների, գույքի (բացի տնից) արժեքն ու նրա եկամուտը: Եթե նա ամուսնացած է և ապրում է իր կնոջ/ամուսնու հետ, ապա մեզ անհրաժեշտ են նրանց երկուսի տվյալները:

Որպեսզի նա իրավասու լինի Հավելյալ օգնություն ստանալու, նա պետք է.

- բնակվի 50 նահանգներից մեկում կամ Կոլումբիայի շրջանում,
- ունենա միջոցներ, որոնք չեն գերազանցում 13,070 դոլարը՝ մեկ անձի դեպքում, և 26,120 դոլարը՝ համատեղ ապրող ամուսնական զույգի դեպքում: Միջոցներն ընդգրկում են բանկային հաշիվները, բաժնետոմսերը, պարտատոմսերը և այլն: Մենք միջոց չենք համարում նրա տունը, ավտոմեքենան և կյանքի ապահովագրերը, և
- ունենա տարեկան եկամուտ, որը չի գերազանցում 16,755 դոլարը՝ մեկ անձի դեպքում, և 22,695 դոլարը՝ համատեղ ապրող ամուսնական զույգի դեպքում: Եթե նույնիսկ նրա տարեկան եկամուտը վերը նշվածից բարձր է, անձը, ում Դուք օգնում եք, կարող է դեռևս որոշակի օգնություն ստանալ: Օրինակ՝ նրա եկամուտը կարող է թույլատրելիից բարձր լինել, եթե նա կամ նրա կինը/ամուսինը.
  - —նյութապես օգնում է իր հետ ապրող ընտանիքի մյուս անդամներին,
  - —հասույթ ունի որևիցե աշխատանքից կամ
  - —բնակվում է Ալյասկայում կամ Հավայան կղզիներում:

Ինչպես կարող եմ օգնել նրան՝ դիմելու հարցում:

Դուք կարող եք հեշտությամբ օգնել որևէ մեկին դիմել Հավելյալ օգնություն ստանալու համար: Պարզապես օգնեք նրան լրացնել Սոցիալական ապահովության վարչության *Medicare-ի դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի ծախսերի համար Հավելյալ օգնության դիմումը* (ձև SSA-1020): Դուք կարող եք օգնել նրան.

- դիմել առցանց՝ ***www.socialsecurity.gov/extrahelp*** կայքէջի միջոցով,
- հեռախոսով դիմելու կամ դիմումի ձև պահանջելու համար զանգահարել Սոցիալական ապահովության վարչություն՝ **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**) հեռախոսահամարով, կամ
- դիմումը լրացնել իր տեղական սոցիալական ապահովության գրասենյակում:

Ինչ պետք է իմանամ:

Medicare-ի օգտառուներին Հավելյալ օգնության համար դիմելու հարցում աջակցություն ցուցաբերելու համար հակառակ էջում տրված է աղյուսակ: Այդ աղյուսակը դիմումի ձև չէ, սակայն դրանում տեղ գտած հարցերը կհեշտացնեն Հավելյալ օգնության համար դիմում լրացնելու գործընթացը:

Խնդրեք այն անձին, ում օգնում եք.

- նշել բոլոր իրերը, որոնց սեփականատերն է ինքը կամ կնոջ/ամուսնու կամ այլ անձի հետ համատեղ: Նա չպետք է ցուցակում ներառի իր տունը, փոխադրամիջոցները, գերեզմանատեղերը կամ անձնական ունեցվածքը:
- հաշվել իր ողջ եկամուտը,
- ժամանակ խնայելու համար նախապես հավաքել փաստաթղթերը:

(շրջել)

Ո՞ր փաստաթղթերը կարող են նախապես պատրաստվել:

- քաղվածքներ, որոնցում ներկայացված են նրա հաշվեկշիռները բանկերում, վարկային միություններում և այլ ֆինանսական հաստատություններում
- ներդրումային հաշվետվություններ
- բաժնետիրոջ վկայականներ
- հարկային հայտարարագրեր
- կենսաթոշակի նշանակման փաստաթղթեր և
- աշխատավարձի կտրոններ

Կարո՞ղ են արդյոք նահանգի գործակալությունները օգնել նրան՝ վճարել իր Medicare-ի ծախսերը:

Երբ Medicare-ի օգտառուները դիմում են Հավելյալ օգնություն ստանալու համար, նրանք կարող եք նաև դիմում ներկայացնել Medicare-ի խնայողական ծրագրերի համար: Դրանք նահանգային ծրագրեր են, որոնք օգնում են հոգալ Medicare-ի մյուս ծախսերը: Սոցիալական ապահովության վարչությունը նահանգի կառավարությանը կուղարկի օգտառուների տվյալները, եթե նրանք Հավելյալ օգնության դիմումի միջոցով մասնավորապես չխնդրեն, որ այդ տեղեկությունները չուղարկվեն: Նահանգի կառավարությունը կկապվի օգտառուների հետ և կօգնի դիմել Medicare-ի խնայողական ծրագրին:

Ինչպես լրացուցիչ տեղեկություններ ստանամ:

Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի ծախսերը հոգալու համար Հավելյալ օգնության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ՝ այցելելով ***www.socialsecurity.gov/extrahelp*** կայքէջը կամ զանգահարելով Սոցիալական ապահովության վարչություն՝ **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**): Սոցիալական ապահովության վարչության ներկայացուցիչները կօգնեն լրացնել դիմումը: Որքան շուտ դիմի օգտառուն, այնքան շուտ կսկսի նպաստներ ստանալ:

Եթե Ձեզ անհրաժեշտ են տեղեկություններ Medicare-ի խնայողական ծրագրերի, Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի կամ որևէ ծրագրում ընդգրկվելու մասին, կամ եթե ցանկանում եք ստանալ «Medicare-ը և Դուք» (*Medicare & You*) ձեռնարկի կրկնօրինակը, ապա այցելեք ***www.medicare.gov*** կամ զանգահարեք **1-800-MEDICARE** (**1-800-633-4227**, հեռատիպ (TTY)՝ **1-877-486-2048**): Նահանգի բժշկական ապահովագրության հարցերով խորհրդատվության և օգնության ծրագիրը (SHIP) նույնպես կարող է պատասխանել Medicare-ին առնչվող հարցերին: Տեղական SHIP-ի հետ կապվելու համար անհրաժեշտ տեղեկությունները կարող եք գտնել Medicare-ի ձեռնարկի ետևում, ինչպես նաև առցանց՝ ***www.medicare.gov*** կայքում՝ Help & Support ցանկի ներքո: Կամ էլ կարող եք հարցնել, երբ կզանգահարեք:

(շրջել)

Օգնեք որևէ մեկին խնայել 4,000 դոլար՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի վճարումների վրա

Մեզ անհրաժեշտ են տեղեկություններ տվյալ անձի (և, եթե նա ամուսնացած է և ապրում է կնոջ կամ ամուսնու հետ, ապա նաև կնոջ կամ ամուսնու) միջոցների և եկամուտի մասին.

Միջոցներ	Արժեք
Բանկային հաշիվներ, այդ թվում՝ հաշվարկային և խնայողական, և ավանդային վկայագրեր	$ _____
Բաժնետոմսեր, պարտատոմսեր, խնայողական պարտատոմսեր, փոխադարձ օգտագործման միջոցներ, անհատական կենսաթոշակային հաշիվներ (IRA) կամ այլ ներդրումներ	$ _____
Տանը կամ այլուր պահվող կանխիկ միջոցներ	$ _____
Որևէ անշարժ գույք՝ իր տնից բացի	$ _____

Եկամուտ	Ամսական գումար
Սոցիալական ապահովության նպաստներ	$ _____
Երկաթուղայինների կենսաթոշակային նպաստներ	$ _____
Վետերանների նպաստներ	$ _____
Այլ կենսաթոշակներ կամ ամենամյա վճարումներ	$ _____
Ալիմենտներ	$ _____
Վարձակալությունից ստացվող զուտ եկամուտ	$ _____
Աշխատողների փոխհատուցում	$ _____
Այլ եկամուտ (օրինակ՝ մասնավոր աղբյուրից կամ նահանգի կողմից վճարվող անաշխատունակության նպաստ)	$ _____

Եկամուտ	Տարեկան գումար
Աշխատավարձ	$ _____
Զուտ հասույթ անհատական ձեռնարկատիրական գործունեությունից	$ _____

Social Security Administration
SSA Publication No. 05-10505-AM
Help Someone Save About $4,000 On Prescription Drug Costs (Armenian)
March 2012